ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<13>> հուլիսի 2026թ. N ՄՈ/416 -Ա

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 15-Ի N ՄՈ/329-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 13-րդ մասով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետով և 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2024 թվականի նոյեմբերի 5-ի N 01/16/34157-2024 գրությունը և «Բաղրամյանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները կատարող Աննա Գրիգորյանի 2026 թվականի հուլիսի 9-ի դիմումը.

ո ր ո շ ու մ ե մ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2026 թվականի հունիսի 15-ի ««Բաղրամյանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Նարեկ Տոմիկյանին արձակուրդ տրամադրելու մասին» ՆՄՈ/329-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.
   1) որոշման 2-րդ կետը «տնօրենի տեղակալ Աննա Գրիգորյանին» բառերից հետո լրացնել «2026 թվականի հունիսի 15-ից հուլիսի 9-ը ներառյալ և «Բաղրամյանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող Անի Քալաշյանին՝ 2026 թվականի հուլիսի 10-ից 17-ը ներառյալ» բառերով:

2) որոշման 3-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝
«3. «Բաղրամյանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ Աննա Գրիգորյանի և «Բաղրամյանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող Անի Քալաշյանի աշխատավարձի վճարումը համապատասխանաբար 2026 թվականի հունիսի 15-ից հուլիսի 9-ը ներառյալ և 2026 թվականի հուլիսի 10-ից 17-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:»

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Восстановимая подпись

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: KHACHATRYAN VAHRAM 29028401179 Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ